

Ռուսաստանը կը հովանաւորէ այդ անիրաւութիւնները: Այս ժողովուրդը արտասահմանի մէջ կը մնայ ցրուած, երկրի մէջ՝ հալածուած եւ ենթակայ զինաթափութեան:

Այս բոլորը ոչ միայն չեն մղած հայութիւնը բուլղերիկեան Ռուսաստանի օրինատացիան որդեգրելու, այլ ընդհակառակը, հայութիւնը թշնամական աչքով կը նայի Սորհրդային Ռուսաստանին, եւ եթէ պարզ ընդդիմադիրի դիրքի մէջ է, պատճառն այն է, որ հայ ժողովուրդի ուժէն վեր է աքթիւ կուլ մղել ռուսական բուլղերիկի դէմ:

* * *

Պահ մը նոյնիսկ, եթէ այդ տասնամեակը մոռնանք. մոռնանք նաեւ տեղի ունեցած չարիքները, եւ միայն մտածենք վաղուան մասին, դարձեալ ռուսական օրինատացիան փրկութեան ճանապարհը չէ: Եթէ պահ մը ընդունինք, որ բուլղերիկեան օրինատացիան իր հետ պիտի բերէ Թուրքիոյ գրաւումը կամ խորհրդայնացումը, գարձեալ չարիքներ կան թաղուած նման հաւանականութեան մը մէջ, չարիքներ, որ պիտի պայթին հայ ժողովուրդի գլխուն:

Որ կողմէն որ ուզենաք մօտենալ խընդրին, դուք պիտի տեսնէք, որ Թուրքիան եւ Թուրք-Թաթարական տարրը կը ցցուին ձեր առջեւ եւ կը ստիպեն որդեգրել որոշ օրինատացիա: Հայ ժողովուրդի բռնելիք դիրքը կախուած է Թուրքիայէն: Հայ բուլղերիկներու ռուսական օրինատացիան հիմնուած է բուլղերիկեան կուսակցութեան հետապնդած նպատակներու վրայ եւ կարգադրուած աչքով մը դիտուած է քրքակամ խնդիրը: Իսկ Հ. Յ. Գաշնակցութիւնը, միայն ու միայն երակէտ ունենալով Միացեալ եւ Անկախ Հայաստանի մը կազմութեան նպատակը, իր աչքը սեւեռած կը պահէ Թուրքիոյ եւ Թուրք-Թաթարական տարրին վրայ: Ու այս որոշակի դիրքէն կը բխի այն հակամարտութիւնը, որ մեր կուսակցութիւնը եւ անոր հետ հայ ժողովուրդի մեծամասնութիւնն ունին բուլղերիկեան Ռուսաստանի եւ մասնաւորաբար հայ բուլղերիկներու հանդէպ:

Այս պատճառով շատ անհրաժեշտ է քննել վաղուան դալիք հաւանականութիւնները

եւ մերկայնել հայ բուլղերիկներու ռուսական օրինատացիան, իր՝ Թուրքիոյ խորհրդայնացման ծրագրով, որ տակաւին չիրականացած՝ հայ դանդուածները չըմբռնուած երազներով կ'օրօրէ, իսկ իրականանալու պարագային հայ ժողովուրդի քաղաքական իտէպլները խորտակելու բնոյթն ունի:

Հ. Յ. Գաշնակցութիւնը կը խօսի Թրքական վտանգի մասին, որպէսզի հայ ժողովուրդը այդ վտանգին դէմ պատրաստուի: Իսկ հայ բուլղերիկներն ու Ռամկալարները կը խօսին Թրքական վտանգին մասին, որպէսզի հայ ժողովուրդը սարսափի, սարկանայ եւ կախուի Ռուսաստանի կամ Թուրքիոյ փէշերէն, ու ուրանայ իր սեփական ուժը:

Թրքական վտանգը, որ իրական է եւ տասնեակ տարիներու դառն փորձովն ապացուցուած՝ հայ բուլղերիկներու եւ անոնց հետեւորդներու գլխաւոր դէնքն է ռուսական օրինատացիան պարտադրելու հայ ժողովուրդին: Սակայն, այդ խոշոր վտանգն իսկ չէ դօրած, որ հայ ժողովուրդը ռուսական օրինատացիան որդեգրէ: Հայ ժողովուրդը ինք իրեն պարզ հաշիւ կուտայ այդ վտանգը կշռած ժամանակ ու կը տեսնէ, թէ բուլղերիկեան կեղծ ու պատիւ «եղբայրութեամբ» չէ որ վտանգը կը դադարի:

Թուրքիան միշտ սրնամ է պղտոր ժամանակաշրջան մը, լայնօրէն իրականացնելու իր ջարդարար ծրագիրները: Օրինակ, համաշխարհային պատերազմը (1915-ին), բուլղերիկեան յեղաշրջումը (1918-ին), կամ «Համաձայնական» պետութիւններու անհամաձայնութիւնը (1921-1922-ին), եւն., եւն.: Այսպիսի ժամանակաշրջաններուն Թուրքիան իր ձեռքերն ազատ զգալով, իրականացուցած է իր նախամտածած դիւային գործերը:

Վտանգը կը սկսի այդ վայրկեանէն: Իսկ այդ վայրկեանին ռուսը Հայաստանի սահմաններու մօտը չէ եւ չի կրնար ըլլալ:

Այդպէս էր 1915-ին, երբ մենք ռուսական օրինատացիա ունէինք: Այդպէս էր 1918-ին, երբ բուլղերիկներն ամբողջ աշխարհը փրկելու յաւակնութեամբ հրապարակ եկան, եւ, սակայն, այդ ճգնաժամային վայրկեաններուն մենք մինակ մնացինք: Հայ ժողովուրդն այս